


825
4-50

1928



717

Հ 4-65₀
Արմ.

82 Մ

Կ-50

4-65_a

Ր. ԿԻՊԼԻՆԳ

ԴԴ

ՌԻԿԿԻ-ՏԻԿԿԻ-ՏԱՎԻ

Թարգմ. ԽՆԿՈ-Ա.ՊԵՐ



ԻՆՁ. № 21728

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ, 1928



ՈՒԿԿԻ - ՏԻԿԿԻ - ՏԱՎԻ

Ահա մի մեծ պատերազմի պատմություն։ Այդ մեծ պատերազմը վարում եր իր սեփական ուժերով Ռիկկի-Տիկկի-Տավին։ Գիտեք վորտեղ։ Սեգովի անունով մի ռազմական փոքրիկ գյուղում, մեծ տան լողանքի սենյակում։ Ճիշտ ե, նրան ոգնեցին Դարգի-Ալավկա դերձակը և Զուչունդրա առնետը, վորը յերբեք սիրտ չեր անում հասնել մինչև սենյակի մեջտեղը, այլ միայն պատերի յերկարությամբ եր վազվզում։ Նա նրան ոգտավետ խորհուրդ եր տալիս։ Բայց իսկական պատերազմ վարողը Ռիկկի-Տիկկի-Տավին եր։ Ռիկկին մանգուստ եր, շատ նման փոքրիկ կատվիկին՝ թե պոչով և թե մազով, բայց զլուխն ու ձեւը կատարյալ հիշեցնում եյն իսկական աքիսին։ Նրա աչքերը և անհանգիստ քթի ծայրը վարդագույն եյն և վոր վոտքով ել լիներ՝ առաջին թե յետի՝ նա կարող եր իր ուզածի պես քորել մարմնի բոլոր մասերը։ Նա կարողանում եր իր պոչն այնպես ուռեցնել, վոր դառնում եր լամպի ապակի սրբող խոզանակի պես մի բան։ Քաշվելով խիտ խոտերի մեջ, նա արձակում եր կովի կոչ—ռիկկ-տիկկ, տիկկի-տիկկի։

Մի գեղեցիկ որ ջուրը հանեց նրան բնից, վորտեղ նա ապրում եր իր հոր և մոր հետ։ Տոնաորակով և խեղղվելով նա տարվում եր ջրի յերեսով, մինչև վոր ընկավ ճամբի մոտի արխը։ Նա այստեղ

առեսավ ջրի յերեսին լողացող մի փունջ խոտ, կպավ նրան և կորցրեց գիտակցությունը: Յերբ նա ուշքի յեկավ, պարզվեց, վորինքն ընկած ե այգու ճամբի մեջտեղը՝ սոսկալի ցեխոտված, իսկ նրա վերել կանդնած մի մանուկ ասում ե:

— Այ, մեռած մանգուստ, տանենք թաղելու:

— Վհչ, — առարկեց մանկան մայրը, — տանենք նրան և չորացնենք, գուցե նա դեռ կենդանի յե:

Նրանք տարան նրան տուն, վորտեղ մի մեծ մարդ սեղմեց նրան ցուցամատով և բթով և հայտարարեց, վոր նա մեռած չի, այլ կիսամեռ ե: Նրանք փաթաթեցին նրան բամբակի մեջ, կրակի վրա տաքացրին. նա բացեց աչքերն ու փոշտաց:

— Ես, իսկ հիմա, — ասավ Մեծ Մարդը (դա անգլիացի յեր, վոր նոր եր ապրում այդ տանը), — միք վախեցնի նրան, նայենք-տեսնենք, ինչ կանի նա:

Դժվար բան չկա, քան թե մանգուստին վախեցնելը, վորովհետեւ այդ գաղանիկը պոչից սկսած մինչև քթի ծայրը զարմանալի հետաքրքիր ե: Բոլոր մանգուստների նշանաբանն այս ե. «Վազիր և իմացիր, բանն ի՞նչ ե»: Իսկ Ռիկկի-Տիկկի-Տավին իսկական մանգուստ եր: Նա լավ դիտեց բամբակը, վճռեց, վոր դա ուտելու բան չի, շրջակայեց ամբողջ սեղանը, նստեց, և կոկելով իր բուրդը, սանրվեց ու ցատկեց մանկան ուսին:

— Զգախես, Թորիկ, — ավելացրեց հայրը: — Այդ նա ուզում եքեղ հետ բարեկամություն հաստատի:

— Այ, նա խտուտ ե տալիս կղակս, — ասավ Թորիկը:

Ռիկկին յերեխայի ոձիքից ներս նայեց, հոտոտեց նրա ականջը և հետո սողաց հատակին, այնտեղ ել նստեց և սկսեց իր քիթը տրորել:

— Այս ինչ բան ե, — աղաղակեց Թորիկի մայրը, — այ քեզ վայրի գաղանիկ: Շատ կարելի յե ձեռնասուն դարձավ դրանից, վոր մենք նրա հետ լավ վարվեցինք:

— Բոլոր մանգուստներն այդպես են, — պատասխանեց նրան ամուսինը: — Յեթե Թորիկը չքաշի նրա պոչից, կամ թե վանդակի մեջ չդնի, նա ամբողջ որերով կվազի տնով մեկ: Նրան ուտելու բան տվեք:

Մ կտոր հում սիս տվին: Ռիկկի-Տիկկի-Տավին շատ եր սիրում հում միս, և յերբ ուտելով վերջացրեց, դուրս յեկավ սրահը, նստեց արևակողը և մազերը գզզեց, վոր դրանք արմատից չորանան: Դրանից ել նա թեթևացավ:

— Միայն թե, — ասավ նա իրեն, — այստեղ չափազանց շատ հետախուզելու բաներ կան, վորոնց յես չեյի գտնի մեր բնում ամբողջ կյանքումս: Յես այստեղ կմնամ և կպարապեմ ուսումնամիրությամբ:

Ամբողջ որը նա թափառում եր տանը՝ այստեղ, այնտեղ: Նա քիչ եր մնում իւեղղվեր լողանքի տաշտում, չթ ի ոքեց զրասեղանի թանաքամանի մեջ և քթի ծայրն այրեց Մեծ Մարդու սիզարից այն ժամանակ, յերբ բարձրացավ այդ մարդու ծնկներին, վոր տեսնի, թե ինչպես են գրում մարդիկ: Յերեկոյան նա վսկեց թորիկի սենյակը նայելու, թե ինչպես են վառում նավթի լամպան: Իսկ յերբ թորիկը պառկեց քնելու՝ նա սողաց դեպի անկողինը, նրա մոտ: Բայց այդ գաղանիկը շատ անհանգիստ ընկեր եր: Ամբողջ գիշերը, ամեն ըուպե ամեն ձայնի վրա վեր եր թոշում և վազում եր իմանալու, թե ինչ բան ե: Պառկելուց առաջ՝ թորիկի հայրն ու մայրը սովորաբար գալիս եյին վերջին անգամ նայելու մանկանը: Նրանք տեսան, վոր Ռիկկին նստած ե բարձրին:

— Այդ ինձ դուր չի զալիս, — դժգոհելով ասավ Թորիկի մայրը, — կարող ե կծել յերեխին:

— Այդպես բան չի անի նա, — առարկեց հայրը, — Թորիկը այդ գաղանիկի հետ ավելի ապահով ե, քան թե իւուզուրկու շան հետ: Թեկուղ հիմա ոճ մտներ մանկանց:

Բայց Թորիկի մայրը լսել անգամ չեր ուզում այդպիսի սարսափների մասին:

Վաղ առավոտյան Ռիկկին, Թորիկի ուսին հեծած, յեկավ առաջին նախաճաշին: Նրան տվին բանան և ծու: Նա հերթով նստում եր բոլոր նախաճաշողների ծնկներին: Ամեն մի կարգին մանգուստ այն հույսն ունի, վոր վաղ բե ուշ լնելու յե տանու մանգուստ, և սենյակներում վազվելու իրավունք ե ստանալու: Այդպես ե յեղել Ռիկկի-Տիկկիի մայրը: Նա յերկար ժամանակ սպառում եր Սեղովշլի

գյուղում մի զորապետի տան։ Մայրը մանրամասն բացատրել ենքան, թե ինչպես պիտի պահի իրեն սպիտակ մարդկանց հետ։

Հետո Ռիկկի-Տիկկին գնաց այգին դիտելու։ Այգին շատ մեծ էր, կիսով չափ մշակված, վորտեղ կային մեծ քանակությամբ վարդի թփեր, կիտրոնի և նարնջի ծառեր, խիտ բուսած բամբուկ և բարձրաբոյ խոտ։ Ռիկկի-Տիկկիի բերանի ջուրը գնաց։

— Վորսի համար հրաշալի տեղ ե,—ասավ նա, և հենց այդ միտքը ուռցըրեց նրա պոչը իսկ և իսկ խողանակի պես։ Նա վազվզում եր այգու մեջ բոլոր ուղղություններով, ժամանակ առ ժամանակ հոտոտելով ողը, և հանկարծ լսեց փշոտ թփից ինչվոր սրտածմիկ ձայներ։ Այդ Դարդի-Սլավկա-դերձակն եր և նրա կինը։

Նրանք հյուսել եյին մի հրաշալի բուն, գնելով իրար վրա յերկու մեծ տերեւ և կարելով նրանց յեզրները բույսի բարակ թելիկներով, իսկ բնի ներսը փոել եյին բամբակ ու փափուկ փետուր։ Բունը որորվում եր այս ու այն կողմը, իսկ իրանք նստել եյին նրա աջ կողմը և լալիս եյին։

— Ի՞նչ ե պատահել,—հարցըրեց Ռիկկի-Տիկկի-Տավին։

— Մեծ դժբախտություն, — պատասխանեց Դարդին, — մեր ճուտիկներից մեկը յերեկ ընկավ բնից, և ոճ՝ Նայան՝ նրան խժուեց։

— Հըմ, — աղաղակեց Ռիկկի-Տիկկի-Տավին, — շատ և շատ ցավալի յե։ Բայց յես այստեղ ոտար եմ, ով ե այդ Նայան։

Դարդին կող հետ կուչ եյին յեկել բնի մեջ, վոչինչ չպատասխանելով։ Խոտի միջից թփի տակից լսվեց մի ցածր Փշոց, մի գարշելի, սարսեցնող ձայն, վորը Ռիկկի-Տիկկիին յերկու փուտ տեղից յետ թոցըրեց։ Յետո քիչ-քիչ բարձրացըրեց խոտի միջից գլուխը և բացված վեղարը ահագին սև կոմբրի, վորի յերկարությունը լեզվից սկսած մինչև պոչը լրիվ հինգ ֆուտ եր։ Բարձրացնելով գետնից իր յերկարության մի յերրորդ մասը՝ ոճն սկսեց տատանվել, կողքից-կողք ընկնել, ինչպես խկական կոաբանջարը քամու առաջ, և նայեց Ռիկկի-Տիկկիի վրա իր չար ոճի աչքերով, վոր յերբեք չեն փոխում իրենց արտահայտությունը, ինչի մասին ել մտածելիս լինի ոճը։

— Ով ե Նայան, — հարցըրեց նա։



— Յես եմ Նայան։ Մեծ բրահման իր նշանը դրել եւ մեր

ցեղի վրա, յերբ առաջին կոմբրան փռեց իր վեղարը քնած բրահմի վրա՝ արեից պաշտպանելու համար։ Նայիր և դողա։

Նա դեռ ելի փռեց իր վեղարը, և Ռիկի-Տիկիին տեսավ ոձի ակնոցները, իսկ և իսկ ողակներին նման, վորոնց ամրացնում են շորի չապրաստները։

Առաջին ըոպեյին Ռիկիին սարսափեց. բայց մանգուստը չի կարող յերկար վախ զգալ, և թեպետ Ռիկի-Տիկիին յերբեք չեր պատահել կենդանի կոմբրի, բայց մայրը նրան կերակրել եր սատկածներով, — սակայն նա գիտեր, վոր չափահաս մանգուստները նրա համար են, վոր կովեն ոձերի հետ և ուտեն նրանց։ Նայա ոձը նույնպես գիտեր այդ և իր սառն սրտի խորքում քիչ չեր վախում Ռիկի-Տիկիից։

— Լավ, — ասավ Ռիկի-Տիկիին, և նրա պոչն սկսեց ուռչել, — քեզ վրա նշան կա - չկա, այդ իմ բանը չի, բայց այդ քեզ իրավունք չի տալիս, վոր դու ծառից ընկած ճուտիկներին ուտես։

Նայան իր մտքի յետևից եր ընկել և դիտում եր խոտերում Ռիկի-Տիկիի ամենափոքր շարժումն անդամ։

Նա գիտեր, վոր բակում մանգուստի յերևալը վատ նշան ե. իր ընտանիքի գլխին մի փորձանք կրերի. բայց մի կերպ ուզում եր քնացնել Ռիկի-Տիկիին։ Նա զլուխը կախեց և ծոեց կողքի վրա։

— Խոսենք, — ասավ նա, — դու ուտում ես ձու, ել ինչո՞ւ չի կարելի թռչուն ուտել։

— Յետ, յետ նայիր, — յերգեց Դարդին։

Ռիկի-Տիկիին յետ նայելու համար ժամանակ չկորցրեց, նա վեր ցատկեց ինչքան ուժ ուներ, և նույն ըոպեյին ել նրա տակը սուլեց Նայայի կատաղի կնոջ զլուխը։ Տիկիին Նայան թագնվել եր խոսակցության ժամանակ և ուզում եր վերջացնի նրան. և Ռիկիին լսեց, թե ինչպես խանում ոձը կատաղի Փշաց՝ վրիպելով նպատակից։

Ռիկի-Տիկիին այն ե փովում եր ոձի մեջքին, և յեթե նա լիներ հին մանգուստ, կղիտենար, վոր այդ ամենահարմար մոմենտն ե հարձակվելու և նրա վողնաշարը կրծելու։ Բայց նա վախում եր կոմբրի պոչի սաստիկ հարվածից։ Նա, ճիշտ ե, կծեց ոձին, բայց մի ակնթարթում յետ թռավ գալարվող պոչից, թողնելով կատաղած ոձին վիրավոր։

— Զար, չար Դարդի, — աղաղակեց ոձը, ձգվելով դեպի բունը,

ինչքան կարելի յե բարձր։

Բայց Դարդին իր բունը շինել եր շատ բարձր, այնպես, վոր ոձը չհասավ քնին։ Միայն կատաղի որորվում եր մի կողմից մյուս կողմի վրա։ Ռիկի-Տիկիին զգաց, թե ինչպես իր աչքերը կարմրեցին և տաքացան (յերբ մանգուստի աչքերը կարմրում են — նշանակում ե՝ կատաղել ե) և նստեց պոչի ու յետի թաթերի վրա, ինչպես իսկ և իսկ փոքրիկ կոկորդիլոս։ Նայելով իր շուրջը՝ նա կատաղությունից ճաքում եր, բայց ոձերը՝ մարդ ու կին նայաները՝ կորան խոտերում։ Յերբ ոձը նպատակից շեղվում ե, փուստ ե գալիս, նա լուսմ ե և վոչոչով ցույց չի տալիս, թե ինչ ե ձեռնարկելու։ Ռիկի-Տիկիի-Տավին չեր ուզում հալածել նրանց, պատճառ՝ վոր իր ուժերից վեր եր յերկու ոձի հետ կովելը միանգամից։ Նա վազեց տան մոտի ճանապարհի վրա և նստեց մտածելու դրության մասին։

Այդ լուրջ բան եր, Յեթե դուք կարդացել եք բնական պատմությունից հին զրքերը, ուրեմն կդիտենաք, վոր յերբ մանգուստը ոձի հետ կովելիս վերք ե ստանում, նա վազում ե ու մի ինչ վոր խոս ե ուտում, վորն ել նրան բուժում ե։ Բայց այդ ճիշտ չի։ Հաղթությունը կախված ե աչքի արագությունից և վոտքերի արագությունից, ոձի հարվածից և մանգուստի թոփչքից։ Անկարելի յե հետեւել ոձի գլխի շարժումին, յերբ նա խփում ե թշնամուն։ Ռիկի-Տիկիին հասկանում եր, վոր ինքը դեռ ջահել ե և նրա ինքնասիրությունը շոյում եր այն, վոր նա դուրս պրծավ պոչի հարձակումից։ Այդ բանը նրան հավատ ներշնչեց՝ վոր ուժեղ ե, և յերբ Թորիկը վագեց յեկավ, Ռիկի-Տիկիին քսվեց նրան, ցանկանալով վոր իրեն փաղաքշեն։ Բայց նույն ըոպեյին, հենց վոր Թորիկը կուցավ, մի ինչ վոր փոքր բան շարժվեց փոշում, և մի բարակ ճայն ասում եր։ «Զգուշացիր, յես մահն եմ»։ Դա կարայտ մոխրագույն ոձն եր, վոր սիրում ե թաղվել փոշու մեջ։ Նրա խայթն ել այնքան վտանգավոր ե, վորքան կոմբրինը։ Բայց այդ ոձն այնքան փոքր ե, վոր նրան վոչ վոք չի նկատում. և այդ պատճառով ել նա մարդկանց ավելի շատ վսաս ե բերում։




Ոիկկի-Տիկկիի աչքերը նորից կարմրատակեցին և նա սկսեց մոտենալ կարայտին յուրահատուկ թոփչքով, վորը ժառանգել եր իր նախորդներից։ Այդ մի շատ զվարճալի, բայց և հավասարակշռված քայլվածք ե, այնպես վոր գաղանիկը ման գալու ժամանակ թոփչքներ կարող ե կատարել ինչ ուղղությամբ ել ուղենա, իսկ ոճի հետ կովելիս՝ այդ մի մեծ առավելություն ե։ Ոիկկի-Տիկկին չգիտեր, վոր նա յենթարկվում ե չափազանց մեծ վտանգի, քան թե նայալի հետ կովելիս կարայտն այնպես փոքր ե և այնպես դառնալ գիտի, վոր յեթե Ոիկկի-Տիկկին չկծի նրա մեջքը՝ գլուխ մոտիկ, այն ժամանակ ոճը կխայթե նրա աչքը կամ շրթունքը։ Բայց Ոիկկի-Տիկկին չգիտեր այդ։ Նրա աչքերը լցովեցին արյունով, և նա որորվեց աջ ու ձախ, վոր մի լավ տեղ գտնի և պաշտպանվի։ Կարայտը առաջ թռավ, Ոիկկին ցատկեց մի կողմ և հարձակվեց ոճի վրա, բայց չար մոխրիկի գլուխը բարձրացավ դեպի Ոիկկիի ուսը։ Ոիկկին խակույն ցատկեց ոճի մարմնի վրայից։ Ոճի գլուխը հետևում եր նրան կրնակով։

Այդ ժամանակ Թորիկը գոչեց։

— Այստեղ, այստեղ։ Տեսէք, մեր մանգուստն սպանում ե ոճին։

Ոիկկի-Տիկկին լսեց Թորիկի մոր լացն ու կոծը։ Հայրը վազեց ձեռնափայտով պատերազմի դաշտ, բայց մինչև գալ հասնելը, կարայտը սխալ թոփչք գործեց, Ոիկկի-Տիկկին թռավ ոճի մեջքին, ծածկեց նրա գլուխը առաջին թաթերով, ինչքան ուժ ուներ՝ կծեց մեջքը և գլորվեց նրանից դենը։ Այս խայթը անդամալուծեց ոճին, և Ոիկկին արդեն ուզում եր նրան ուտել՝ սկսած պոչից՝ իր ցեղի սովորության պես, յերբ հանկարծ հիշեց, վոր յեթե մանգուստը շատ ուտի՝ կծանրանա դարը բարձրանալիս։ Յեկ վորովհետեւ նա պիտի իր ուժերն ու արագաշարժությունը պահպաներ, ուրեմն շատ կուշտ պիտի չուտեր։ Ոիկկին գնաց լողանալու թփի տակ՝ փոշու մեջ, այնինչ այդ միջոցին Թորիկի հայրը փայտով թակում եր սատկած ոճին։

— Ինչու յե այդպես անում, — մտածում եր Ոիկկի-Տիկկին, — զե՞ վոր յես նրան վերջացրի։



Թորիկի մայրը բարձրացը գաղանիկին գետնից, գրկեց նրան՝ ասելով։

— Սա ազատեց Թորիկին մահից։

Ինքը Թորիկը նայում եր ծնողներին վախից լայն կլորացած աչքերով։ Ոիկկի-Տիկկիին շատ եր զվարճացնում այդ տեսարանը, վոր նա, իհարկե, չեր հասկանում։ Թորիկի մայրը կարող եր գաղանիկին շոյել, թեկուզ նրա համար, վոր նա պառկել եր փոշու մեջ։ Այդ ամենը Ոիկկիին շատ եր զվարճացնում։

Ճաշին և այդ յերեկո՝ ման գալով սեղանի վրա բաժակների արանքներում՝ նա ազատ կարող եր ճաշակել զանազան քաղցր ուտելիքներ, բայց Ոիկկին մտաբերում եր այն ոճ՝ ամուսիններին, յերկու նայալին։ Թեկ Ոիկկիին հաճելի յեր, վոր Թորիկի մայրը շոյում ե և փաղաքշում իրեն, և Թորիկն ել թույլ ե տախա իր ծնկին նստելու, բայց աչքերը ժամանակ առ ժամանակ կարմրատակում ելին, և նա արձակում եր իր յերկարածիոց պատերազմի կոչը։ — Ոիկկի-տիկկի, տիկկի-տիկկի։


Թորիկը տարավ նրան իր անկողնու վրա և ստիպեց, վոր քնի իր կզակի տակ։ Ոիկկի-Տիկկին անբարեկիրթ չեր, վոր կծեր կամ չանկոեր մանկանը։ Բայց հենց վոր Թորիկը քնեց, նա ուղերզվեց իր գիշերային զբոսանքները կատարելու տան մեջ և մթնովն ընկավ Զուչունդրամշկամկան վրա, վոր թափառում եր պատի յերկարությամբ։ Զուչունդրան մի շատ անբախտ գաղանիկ ե։ Նա և՛ ծվծփում ե, և՛ վրչում ե ամբողջ գիշերը, պատրաստվելով դուրս գալու սենյակի մեջ տեղը, բայց յերեք չի վճռում այդ քայլն անել։

— Մի սպանիր ինձ, — ասում եր Զուչունդրան լացակումած, — Ոիկկի-Տիկկի, մի սպանիր ինձ։

— Միթե դու կարծում ես, վոր ոճին հաղթողը քեզ պես վախկոտ մկան ձեռք կտա, — արհամարհանքով ասավ Ոիկկի-Տիկկին։

— Ու սպանողին ոճերը կսպանեն, — ասավ Զուչունդրան։ Իսկ յես կարող եմ հավատացած լինել, վոր նայան մի մութ գիշեր ինձ քու տեղը չի ընդունի։

— Այդպիսի վտանգ յերբեք չի նախատեսնվում, — ասավ Ոիկկի-Տիկկին, — չե՞ վոր նայան գտնվում ե այդում, իսկ դու, յես գիտեմ, յերբեք այնտեղ չես մտնում։



— Իմ ազգական Զույան ինձ ասավ...—սկսեց Զուչունդրան և հանկարծ լոեց:

— Ի՞նչ ասավ քեզ:

— Սպաս, Նայան ամեն տեղ է, Ռիկկի-Տիկկի: Դու ինքդ խոսիր ազգականիդ հետ այգում:

— Ասա, շուտով, Զուչունդրա, յեթե վոչ՝ քեզ կկծեմ:

Զուչունդրան նստեց, լաց յեղավ և արցունքները գլորվեցին նրա բեխերի վրայով:

— Յես խղճուկ, վողորմելի արարած եմ,—թընդթընդում եր նա, — յես քաջություն չունիմ, վոր սենյակի մեջտեղը վազեմ: Սպաս... յես չեմ համարձակվում քեզ բան պատմելու, և միթե դու չես լսում, Ռիկկի-Տիկկի:


Ռիկկի-Տիկկին ականջ դրեց: Տանը, առաջվա պես, ամեն ինչ հանդիստ եր և լուռ, բայց նրան այնպես թվաց, վոր մի թույլ չանկոց ե լսում, ինչպես թե ճանձը լուսամուտի ապակու վրայով բղզալեն գնա:

— Դա Նայան է, կամ տիկին Նայան, — ասավ նա ինքն իրեն, — ներս ե սողում լողանքի սենյակը դուռն ձեղքից: Դու ճիշտն ես ասում, Զուչունդրա, յես պիտի խորհրդակցեմ Զույի հետ:

Ռիկկի-Տիկկին վազեց Թորիկի լողանքի սենյակը, բայց այնտեղ վոչ ոք չկար, այնտեղից նա վազեց Թորիկի մոր լողանքի սենյակը: Կոկ սվաղած պատի տակից մի աղյուս եր հանված՝ ջուրը սենյակ գալու համար: Յեփ յերբ Ռիկկի-Տիկկին մտավ լարխը, վորով ջուր են բաց թողնում, լսեց ոձ ամուսինների ձայնը: Նրանք փափսում եյին լուսնյակի լույսի տակ:

— Յերբ տանը մարդ չլինի, — ասում եր տիկին Նայան իր ամուսնուն, — դու պիտի տուն մտնես: Գնա կամացուկ և հիշիր, վոր առաջին անգամ պիտի խայթես այն Մեծ Մարդուն, վոր սպանեց կարայտին: Հետո՝ յեկ այստեղ, և մենք յերկուսով միասին կվորսանք Ռիկկի-Տիկկիին:

— Բայց դու արդյոք հավատացած ես, վոր մենք մի բան վաստակած կլինենք, յեթե սպանենք մարդկանց, — հարցրեց պարոն Նայան:





— Անպայման, շատ բան: Քանի դեռ այս տանը մարդ չեր բնակում, տեսէլ եյթ արդյոք դու յերբեցե մեր այգում մանգուստ: Յեթե տունը դատարկ լինի, մենք կթագավորենք այս այգում: Հիշիր նույնպես, հենց վոր մեր ձագուկները սեխի մարդում ձվերից դուրս կզան (իսկ այդ կարող ե հենց վաղը լինի), նրանց հարկավոր ե ընդարձակ տեղ և հանդիստ:


— Յես այդ բանը մոռացել եմ,—աղաղակեց Նայան,—յես կդնամ, բայց հետո կարիք չենք ունենա Ռիկի-Տիկիկին վորսալու: Յես կսպանեմ Մեծ Մարդուն, նրա կնոջը և մանկանը, յեթե հաջողվի, և կամացուկ կհեռանամ: Այն ժամանակ տունը կդատարկվի, և Ռիկի-Տիկիկին ել կհեռանա:

Ռիկի-Տիկիկին կատաղությունից դողում եր, լսելով այդ խոսակցությունը: Անա Նայայի գլուխը յերևաց դուան՝ ճեղքում և նրան հետևեց հինդ ֆուտանոց սառն մարմինը: Չնայած իր սաստիկ կատաղությանը՝ Ռիկի-Տիկիկին ակամա սարսափեց, տեսնելով ահազին կորի մարմինի չափը: Նայան գլուխը վեր բարձրացրեց ու լավ դիտեց լողանքի սենյակը մթության մեջ: Ռիկի-Տիկիկին կարողացավ տեսնել՝ ինչպես են փայլում նրա աշքերը:

— Յեթե յես սրան այստեղ սպանեմ, այդ կիմանա տիկին Նայան. իսկ յեթե կովեմ նրա հետ մի ընդարձակ տեղ, առավելությունը նրա կողմը կլինի: Ի՞նչ անեմ,—ասում եր ինքն իրեն Ռիկի-Տիկի-Տալին: Նայան կողքից-կողք եր դառնում: Հետո Ռիկիկին լսեց, թե ինչպես նա ջուր ե խմում այն ամանից, վորով լողանքի ավագանը ջուր ելին լցնում:

— Լավ,—ասում եր ոձը,—յերբ կարայտին սպանեցին, Մեծ Մարդու ձեռքին փայտ կար: Կարելի յե, վոր այդ փայտը հիմա յել նրա մոտ լինի: Բայց յերբ առավոտյան լողանալու դա, փայտը հետը չի լինի: Յես նրա գալուն այստեղ կսպասեմ. տիկին Նայա, դու լսում ես. յես այստեղ կսպասեմ մինչեւ լուսաբացը:

Դրսից հարցին պատասխան չհետևեց, և Ռիկի-Տիկիկին հասկացավ, վոր տիկին Նայան գնացել ե: Նայան փաթաթվեց ամանի շուրջը: Ռիկի-Տիկիկին առաջվա պես կանգնած եր տեղը, անշարժ, ինչպես մահը: Մի ժամ անց՝ նա կամաց կամաց սկսեց շարժեցրեց քնից. նա իր յերկու փողանի հրացանը դատարկեց ոձի կոնակին, հենց վեղարի յետեղ:



գեալ ամանը: Նայան քնել եր, իսկ Ռիկի-Տիկիկին, նայելով նրա ահազին մեջքին, աչքերով ընտրեց կպչելու տեղը: «Յեթե յես առաջին թռիչքիս չկծեմ նրա վողնաշարը,—ասում եր Ռիկիկին,—նա կկարողանա կռվի դուրս գալ իմ դեմ, իսկ յեթե նա կսկսի կռվել, ո, Ռիկիկի»: Նա աչքերով չափեց վզի հաստությունը և տեսավ, վոր այդ իր ատամների բանը չի, իսկ յեթե կծելու տեղ պոչի շրջանն ընտրեր, այդ նշանակում եր ոձին իզուր տեղը կատաղեցնել:

— Հարկավոր ե գլուխը,—վճռում ե նա վերջապես:—Այս, գլուխը, վեղարից վերև: Յեվ յերբ կկաչեմ այնտեղից, այն ժամանակ պետք չեմ ունենա ատամներով սեղմելու:

Յեվ նա թռավ ոձի վրա. ոձն իր գլուխը դրել եր կավե ամանի ուռած փորի տակ, ամանից քիչ հեռու: Յեվ յերբ Ռիկիկիի ատամները սեղմվեցին, նա իր մեջքը հենեց ամանի փորին, վորպեսզի գլուխը պահի: Այդ նրան մի վայրկյանի գերակշռություն տվեց և նա ոգտագործեց այդ գերակշռությունը լիովին: Հետո նա տարութերվեց մի կողմից մյուսը, ինչպես մուկը շան բերանում՝ աջ, ձախ, վերև, ներքև: Բայց Ռիկիկիի աչքերը կարմրել ելին, և նա պինդ կպել եր, այնինչ ոձն իր մարմինը մարակի նման խփում եր հատակին, շպրտելով դես-դեն սենյակի աման-չամանը, շերեփները, սապնի ամանները, ձլոբները: Ռիկիկին սեղմել եր իր ծնոտներն ամուր ու ամուր. նա հավատացած եր, վոր ջարդ ու փշուր կլինի, և իր տոհմի պատվի համար գերադասեց, վոր նրան գտնեն, ատամները պինդ սեղմած: Նրա գլուխը պտույտ եր գալիս, ամբողջ մարմինը ցավում եր, և նրան թվաց, վոր ինքը կտոր-կտոր կլինի, յերբ հանկարծ լսվեց մի վորոտաձայն դղբուց: Մի տաք քամի կպավ նրան, կարմիր կրակը վառեց նրա մորթը, և նա ուշաթափվեց: Աղմուկը Մեծ Մարդուն զարթեցրեց քնից. նա իր յերկու փողանի հրացանը դատարկեց ոձի կոնակին, հենց վեղարի յետեղ:

Ռիկի-Տիկիկին շարունակեց մնալ ոձի յետեղ, աչքերը խփած և հավատացած եր, վոր ինքն արդեն մեռած ե: Գլուխը չեր շարժվում, իսկ Մեծ Մարդը բարձրացրեց Ռիկիկիին, ասելով. «Դարձյալ մանգուստը: Ալիսա, այս փոքրիկն այս անգամ ազատեց մեր կյանքը»: Թորիկի մայրը դուրս վազեց դեմքը ձյունի պես սպիտակ և աչքերը

չոեց ոճի դիմակին, իսկ Ոիկկի-Տիկկին իրեն զցեց Թորիկի սենյակը և համարյա ամբողջ գիշերը կամացուկ տեղից վեր եր թռչում, վոր հավաստիանա ինքը կենդանի յե թե մեռած ե, իսկապես հարյուր կտոր չի դարձել, ինչպես այդ իր աչքին եր յերևում:

Լուսաղեմին քնել եր մեռածի պես, բայց շատ գոհ եր իրենից: — Հիմա մնում ե, վոր հաշիվս մաքրեմ տիկին Նայայի հետ, այդ կարծենա հինգ այնպես պարոն Նայա: Յեվ ով գիտե, արդյոք ձվերից գուրս չեն յեկել ոճի ճուտերը, վորոնց մասին մայր-ոճն եր խոսում: Կրակ բան ե: Պետք ե վազել Դարդու մոտ, — ասում եր նա:

Զապասելով նախաճաշին՝ Ոիկկին վազեց դեպի փշի թռւփը, վորտեղ Դարդին լիաբուկ յերգում եր հաղթական յերգը: Նայայի մահման ուրբը թռել էր այգին, վորովհետև այգին ավլողը նրա դիմակը զցեց աղբակույտի մեջ:

— Ախ դու, հիմար, մի փունջ բմբուլ, — կոպիտ կերպով ասավ Ոիկկի-Տիկկին, — գոտել ե յերգելու ժամանակը: — Նայան չկա, չկա, — յերգում եր Դարդին: — Հերոս Ոիկկի-Տիկկին բոնեց նրա զլուխը և պինդ պահեց նրան: Մեծ Մարդը բերեց իր ահազին գավազանը, և Նայան յերկու կտոր յեղավ: Հիմա նա ել յերբեք իմ ճուտիկներին չի ուտի:

— Այդ բոլորը քո ասածն ե, բայց ուր ե տիկին Նայան, — հարցնում ե Ոիկկի-Տիկկին և կասկածանքով դիտում ե շուրջը:

— Տիկին Նայան մոտեցավ լողանքի սենյակի ճեղքին և կանչեց, Նայա, — շարունակեց Դարդին, — և Նայան բարձրացավ փայտի ծայրը: Բակ սրբողը առավ նրան փայտի ծայրին ու շպրտեց աղբի մեջ: Յերգենք մեծ և կարմրածք Ոիկկի-Տիկկին — ու բուկն ուղցնելով առաջվանից ել բարձր յերգեց:

— Յեթե յես կարողանայի հասնել քո բնին, դեն կշպրտեյի քո ճուտիկներին, — չարացավ Ոիկկի-Տիկկին: — Ամեն բանն իր ժամանակն ունի: Քեզ համար այդտեղ բնում լավ ե, իսկ այստեղ ինձ համար վոչ թե կյանքի, այլ մահու կոփվ ե:

— Գոնե մի ըոպե թող յերգելո, Դարդի: — Մեծ և գեղեցիկ Ոիկկի-Տիկկիի պատվի համար՝ ել չեմ յերգի, — աղաղակեց Դարդին, — թող քո ուզածը լինի, ո, դու, հրեշ-ոճին սպանող:

— Յերբորդ անգամն ե հարցնում եմ քեզ: ուր ե տիկին Նայան: — Աղբանոցում, գոմի մոտ, վողբում ե իր ամուսնուն, մեծդղ Ոիկկի-Տիկկի, սպիտակատամ:

— Թող կորչեն իմ սպիտակ ատամներս. չգիտեմ, վորտեղ ե պահում ձվերը:

— Սեփի մարգում, պատի մոտ, վորտեղ համարյա ամբողջ որը արե կա: Նա թագցրեց նրանց մի քանի շաբաթ սրանից առաջ:

— Յեվ դու մինչև հիմա այդ բանն ինձ չես ասել, պատի մոտ, համ, ասում ես դու:

— Ոիկկի-Տիկկի, դու ձու չես ուտում:

— Վաչ, չեմ ուտում, Դարդի:

— Յեթե մի կաթիլ խելք ունենաս, կթռչես գոմի մոտ, թեդ ջարդած կձեւանաս և թող տիկին Նայան յետեղդ ընկնի դեպի այս թռւփը, հասկանում ես: Յես պետք ե գնամ դեպի սեխի մարդը, իսկ յեթե գնամ այնտեղ, նա իսկույն ինձ կնկատի:

Դարդին բավական հիմարի մեկն եր, մի մտքից ավելի միտք զլխումը չեր մնում: Յեվ վորովհետև Նայայի ճուտերը ծնվում եյն ձվերի մեջ, ինչպես և իր ճուտերը, ուրեմն նրա զլուխը չեր մտնում, թե կարելի յե նրանց սպանել: Բայց նրա տիկինը մի խելացի թռչուն եր և շատ լավ եր իմանում, վոր կոբրի ձվերը վաղ թե ուշ պիտի դառնան փոքրիկ կոբրիկներ: Մայր-թռչունը թռավ բնից, իր տեղը նստեցրեց Դարդուն, վոր նա տաքացնի ճուտիկներին, և սկսի իր յերգը յերգել ոճի մահվան մասին: Դարդին մի քանի բաներում շատ եր նմանվում մարդկանց:

Մայր-թռչունը թափահարեց թեերը հենց ոճի քթի առաջ, աղբակույտի մոտ և ճշաց. «Ոփ, թես ջարդեցին: Յերեխան քար զցեց, կպավ, թես ջարդեց»:


Նայան զլուխը բարձրացրեց և ֆշաց.

— Դու զգուշացրիր Ոիկկի-Տիկկիին, յերբ յես ուզում եյի նրան կծել: Կաղալու համար շատ անհարմար ժամանակ ես գտել:

Յեվ նա հարձակվեց Դարդու կնոջ վրա, գալարվելով փոշու մեջ:

— Յերեխայի մեկը թես ջարդեց, — գանգատվում եր Դարդու կինը:





— Ե, ինչ. քեզ մխիթարելու համար կարող եմ ասել, վոր քո
մահից հետո՝ նրա հետ հաշիվ կտեսնեմ: Իմ ամուսինն առավոտից
ընկած ե աղբակույտում, բայց գիշերը դեռ չեկած, յերեխան ել
տանից կվերանա: Ել նչ չարչարվեմ, գիտեմ, վոր քեզ բռնելու
յեմ: Ո, հիմար, նայիր աչքերիս:


Բայց թոշունը զիտեր, վոր այդ չի կարելի անել: Ոճի աչքերին
նայող թոշունը սաստիկ վախից քարանում մնում է, չի կարողա-
նում տեղից շարժվել: Դարզու կինը վոստվոստալով վազում եր
գետնի յերեսով և ցավալի ծվծվում, իսկ ոճն արագացնում եր
իր վազը:

Ոիկի-Տիկին լսեց, վոր գալիս են նրանք գոմի ճամբով և
ամբողջ թափով հարձակվեց դեպի սեխի մարդը՝ պատի մոտ: Այս-
տեղ, սեխի մարդի տաք խոտերում շատ վարպետորեն թագցրած
եյին հինգ ձու՝ բանտամյան հավի ձվի մեծությամբ, բայց անկճեալ,
ծածկված բարակ մաշկով:



— Ելի մի որ՝ և արդեն ուշ կլիներ, — ասում եր Ոիկի-Տիկին:
Նա պարզ տեսնում եր ձվերի մեջ կծկված փոքրիկ կորրիկներին
և գիտեր, վոր այն ըովեյից, հենց վոր դուրս գային կճեպից, Կկա-
րողանային մարդ սպանել, կամ մանգուստին:

Շուտ-շուտ նա կծոտում եր ձվերի սուր ծայրերը, աշխատելով
խեղել կորրիկներին, և ժամանակ առ ժամանակ խառնում եր խո-
տերը, վորպեսզի համոզվի, արդյոք աչքեց բաց չի թողել ձվերից
մեկը: Վերջապես յերեք ձու մնաց: Ոիկի-Տիկին սկսեց ուտախ-
հոհուալ, մեկ ել հանկարծ լսեց թոշնի, Դարզու կնոջ աղաղակը:



— Ոիկի-Տիկի, յես ոճին բերի դեպի տուն, իսկ նա գնաց
դեպի սրահը: Շուտ հասիր, քանի չի խայթել:

— Ոիկի-Տիկին ջարդեց յերկու ձուն, գլխակոնծի տալով
թուալ սեխի մարդից՝ յերբորդ ձուն բերանում, և հենց վոր նրա
վոտները գետին առան, վազեց դեպի սրահը: Այստեղ նստած եյին
նախաճաշի Թորիկը հոր և մոր հետ, բայց Ոիկի-Տիկին տեսնում եր,
վոր նրանք դեռ բան չեն ուտում: Նրանք նստած եյին քարե ար-
ձանի պես, դեմքերը գունատ: Ոճը պառկած եր, խսիրի վրա կծկված՝
Թորիկի աթոռից վոչ հեռու: Թորիկը նստած եր աթոռին՝ վոտները
մերկ: Ոճը շուռ ու մուռ եր գալիս, յերգելով իր հաղթական յերգը.

— Մեծ Մարդու վորդի, քո նայրն սպանեց ամուսնուս՝ նայա-
յին, — յերգում եր նա, — նստիր անշարժ: Յես դեռ պատրաստ չեմ,
մի քիչ սպասիր: Հանգիստ նստեցեք յերեքով, յեթե շարժվեք՝ կխայ-
թեմ: Ո, հիմար մարդիկ, իմ նայային սպանողներ:

Թորիկի աչքերն ուղղած եյին հոր վրա, իսկ նայրը կարողանում
եր միայն փսփսալ:

— Հանգիստ նստիր, Թորիկ, ժաժ չգաս, շշարժվես տեղիցդ:
Բայց այդտեղ մոտ վազող Ոիկի-Տիկին գոչեց.

— Յետ դարձիր, տիկին նայա, կովենք:

— Դրա ժամանակն ել կգա: Հիմա քեզ հետ ել հաշիվ կտեսնեմ:
Նայիր քո բարեկամներին, Ոիկի-Տիկի, տես ինչպես անշարժ են և
գունատ: Նրանք վախից քարացել են, նրանք չեն համարձակում
տեղից ժաժ գալ, և յեթե դու ելի մի քայլ առաջ ես յեկել՝ կխայթեմ:

— Նայիր քո ձվերին, — գոչեց Ոիկի-Տիկին, քո ձվերին պատի
մոտ, սեխի մարդում: Գնա և աչքովդ տես, տիկին նայա:

Ահապին ոճը յետ դարձավ և տեսավ ձուն սրահում:

— Ալս, դա տուր ինձ, — գոչեց նա:

Ոիկի-Տիկին թաթերով զրկեց ձուն և աչքերն արյունով
լցվեցին:

— Ինչ կտաս ձվի փոխարեն, ոճ, փոքրիկ կորրիկի փոխարեն,
նոր իշխանիկ կորրիկի, ձեր ցեղի վերջին, ամենավերջին կորրիկի
փոխարեն: Մնացածներին մըջյուններն արդեն ուտում են սեխի
մարդում:

Նայան բոլորովին յետ դարձավ, ձվերի համար մոռանալով ամեն ինչ, և Ռիկկի-Տիկկին տեսնում թե եր ինչպես Թորիկի հայրը մեկնեց իր ահագին ձեռքը, բռնեց Թորիկին ուսից և քաշեց նրան թեյի սեղանի վրայով, ազատելով Նայայից:

— Խաբեցի, խաբեցի. Եյ, սիկկա-տիկկ, տիկկ-տիկկ,—հոհում եր Ռիկկի-Տիկկին:—Յերեխան անվանագ ե, և, զիտես, յես բռնեցի Նայային վեղարից՝ յերեկ գիշեր՝ լողանքի սենյակում: Այդտեղ Ռիկկի-Տիկկին, անկվելով զլսի վրա, վոտներով ողի մեջ բուլղի-բուլղի յեր անում:— Նա,—շարունակեց Ռիկկի-Տիկկին, — Նայան՝ ինձ դես-դեն եր զցում, բայց չկարողացավ ինձ իր վրայից պոկել, դեն շպրտել, և մարդը նրան դեռ չեր կտրտել, — Նա արդեն սատկած եր: Այդ որին յես հասցրի: Եյ, տրա-լա-լա, սիկկա-տիկկ, տիկկի-տիկկի: Մոտ յեկ, մոտեցիր, տիկին Նայա, յեկ կովենք: Յերկար այրի չես մնա:

Նայան տեսնում ե, վոր կորցրեց Թորիկին խայթելու հարմար առիթը. և տեսնում ե իր ձուն Ռիկկի-Տիկկի թաթերում:

— Չուն ինձ տուր, Ռիկկի-Տիկկի, տուր ինձ վերջին ձուս, և յես կհեռանամ ու յերբեք չեմ վերադառնա այստեղ, — աղաչում եր նա, բանալով իր վեղարը:

— Այս, դու բոլորովին ճիշտ ես ասում, դու ել յերբեք այստեղ չես վերադառնա: Դու յել կգնաս աղբակույտ՝ քո սիրելի ամուսնուդ յետեցից: Կովիր, Նայա: Մեծ Մարդը գնաց հրացանը բերելու, կովիր, կհաղթես:

Ռիկկի-Տիկկին թռչկոտում եր ոձի շուրջը, շգուշություն պահանելով և նրա կարմրատակած աչքերը վառվում եյին ածուխի պես: Ոձն իրեն հավաքեց և հարձակվեց նրա վրա: Ռիկկի-Տիկկին վեր ցատկեց, հետո՝ յետ: Նորից և նորից ոձը հարձակվեց և ամեն անգամ նրա գլուխը շիկալով կաչում եր սրանի խորին և ինքը կծկում եր ժամացույցի զսպանակի պես, իսկ Ռիկկի-Տիկկին պարում եր նրա շուրջը, աշխատելով թիկունքն անցնել: Ոձը պտտվում եր և աշխատում, վոր յերես լինին, իսկ պոչը խորին քսվելուց մի տեսակ ձայն եր դուրս գալիս, շատ նման քս մուց հալածված չոր տերեների ձայնին: Ռիկկի-Տիկկին մոռացավ ձուն, վոր դեռ ընկած եր սրահում, իսկ ոձը հա մոտենում եր

ձվին: Վերջապես, հարմար րոպե գտնելով, հաջողցնելով, յերբ Ռիկկի-Տիկկին իր շունչն եր հավաքում, նա վրա պրծավ, ձուն յերախն առավ և գեպի սանդուխը: Այնտեղից ել թռավ նետի պես. Ռիկկի-Տիկկին ել կրնկակոխ նրա յետելից:

Յերբ կոբրան ազատում ե իր կյանքը՝ նա սլանում ե, կեռ ու մեռ գալով, ձիուն խփող մտրակի պես: Ռիկկի-Տիկկին հասկանում եր, վոր նրան բռնել ե հարկավոր, այլ կերպ՝ դարձյալ կսկսվեն աղմուկն ու անհանգստությունը: Ոձը վազում եր ուղիղ գեպի փշաթփի բարձր խոտերը. և յերբ վազում եր՝ Դարզին յերգում եր իր հիմար, հաղթական յերգը: Բայց Դարզու կինը մարդուց ավելի խելացի յեր: Նա ցած թռավ բնից յերբ ոձը մոտեցավ, և սկսեց թափահարել թևերը նրա գլխին: Յեթե Դարզին ոգնության զար իր կնոջը, յերկուսով ոձին ճանապարհը փոխել կտային, բայց ոձը ծալեց վեղարը և արագացրեց վազքը: Մակայն մի վայրկյան ուշանալը բափական կլիներ, վոր Ռիկկին հասներ ոձին: Յերբ ոձն իրեն զցեց այն բռնը, վորտեղ ապրում եյին ամուսնու հետ, սպիտակ ատամները կպան նրա պոչին և Ռիկկին պոչի հետ գնաց, թեև վոչ ամեն մանգուստ, վորքան ել նա ծեր և խելացի լիներ, կոբրի հետ բռն չեր մտնի: Բունը մութն եր և Ռիկկին չգիտեր՝ թե այդ բռնը վորտեղ կլայնանա, կընդարձակվի, վոր ոձը դառնա և իր հետ կովի: Նա պինդ կպել եր պոչից և հենվել եր վոտներին, վորպեսզի դանդաղեցնի տաք և խոնավ բռնը մտնելը... Հետո բնի մուտքի խոտերը դատարեցին որորվել և Դարզին յերգեց:

— Հիմա արդեն Ռիկկի-Տիկկի վերջն ե: Յերգենք նրա մահը: Հերոս Ռիկկի-Տիկկին գնաց: Նայան կսպանի նրան:— Յեվ նա յերկարացրեց իր թաղման յերգը, վոր նոր եր բանաստեղծել: Բայց նա դեռ չեր հասել յերգի ամենասրտառուչ տեղը, յերբ մեկ ել խոտերը շարժվեցին, և Ռիկկի-Տիկկին ցեխոտված՝ կամաց դուրս յեկավ բնից և սկսեց բեխերը լիզել: Մի թեթև ճիչ արձակելով՝ Դարզին լոեց: Ռիկկի-Տիկկին թափ տվեց իր մորթու փոշին և փոշտաց:

— Ամեն ինչ վերջացած ե, — աղաղակեց նա, — այրին ել յերբեք լույս աշխարհ դուրս չի գա:

Այդ խոսքերը լսելով, կարմիր մըջյունները, վորոնք քնած ելին
խոտերի մեջ, սկսեցին հավաքվել խմբերով և գնալ ստուգելու Ռիկկի-
Տիկկիի խոսքերի ճշտությունը:

Ռիկկի-Տիկկին կծիկ դարձած քնել եր խոտերում և քունը անեց
մինչև իրիկուն այդ բազմաչարչար որվա մեջ:

— Ե, հիմա,—ասավ նա զարթնելուց հետո,—ուղեորվենք տուն+
Հաղորդիր պղնձագործին, Դարզի, և թող նա այգում հայտարարի,
վոր այրի Նայան ել մեռավ, գնաց:

Պղնձագործը թռչուն ե, այնպիսի ձայն ե հանում, ինչպիսին
հանում ե մուրճը պղնձե ամանին խփելիս: Այդ անում ե նրա
համար, վոր մունետիկի պես Հնդկաստանի այգիներում նորություն-
ներ հաղորդի բոլոր թռչուններին: Ճամբով գնալիս՝ Ռիկկի-Տիկկին
լսեց Պղնձագործի ձայնը, վոր հետզհետե բարձրացավ ու զիւ զընդ-
զնդաց «Դիւ-դոն-դին:—Նայան ընկավ, դին... Այրի Նայան ընկավ,
դոն, դին-դոն-դին»: Այս ձայնի վրա բոլոր թռչունները յերգե-
ցին, բոլոր գորտերը կրկնացին, վորովհետև Նայաները՝ մարդ ու
կին՝ շատ ելին սիրում թռչունների և գորտերի միս:

Յերբ Ռիկկին տուն վերադարձավ՝ Թորիկը, մայրը (նա դեռ
շատ գունատ եր, վորովհետև ուշաթափվել եր) և հայրը դիմավո-
րեցին նրան և քիչ եր մնում վոր լաց լինելին: Այդ իրիկուն ինչ
վոր տալիս ելին նրան՝ ուտում եր, և Թորիկի ուսին նստած՝ գնաց
քնելու: Թորիկի մայրը Ռիկկիին յերեխայի ուսի վրա քնած գտավ,
յերբ կես զիշերին մտավ մանկանոց Թորիկին տեսնելու:

— Նա ազատեց և մեր, և Թորիկի կյանքը,—ասում եր նա
իր ամուսնուն, —հասկացիր, հա, նա մեր բոլորիս կյանքն ազատեց:

Ռիկկի-Տիկկին զարթնեց և տեղից վեր թռավ. մանգուստները
զգայուն են, խորը չեն քնում:

— Աիս, այդ դուք եք,—ասավ նա Թորիկի մորը,—ել անհան-
գստանալու բան չկա: Բոլոր կոբրերը վոչնչացան, և թեկուզ կեն-
դանի յել լինելին, յես այստեղ չեմ:

Ռիկկի-Տիկկին լիակատար իրավունք ուներ հպարտանալու,
բայց նա չեր գոռողանում և աղնվաբար ծառայում եր մարդկանց,

Ինչպես իսկական մանգուստ, թե ատամով, թե աչքով, թե թռիչ-
քով, և նրա ներկայությամբ վոչ մի կոբրա չի համարձակվի քիթը
ցույց տալ այգու պատերից:



ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐՔՈՒՅՑՆԵՐ

Լույս են տեսել:

ՅԵՐԿՐԻ ԽՈՐՔԵՐՈՒՄ	(մեծաղիր, նկարագարդ)	15 լ.
ՔԻՄԻԿՈՍ ԿՈՒՑԶԿԱՆ	»	28 լ.
ՃԱՄԲՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԱՅԵՐՈՊԼԱՆՈՎ	»	28 լ.
ՄՈԾԱԿԻ ՅԵՎ ԱՐՁԻ ՄԱՍԻՆ	»	15 լ.
ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ԱՊՐՈՒՄ ՏԻԿՆԻԿՆԵՐԸ	»	16 լ.
ՄԻՆԻՍՏՐ ՄԵԿ ԺԱՄՈՎ	»	18 լ.
ԱՆՁՆՎԵՐ ՏՂԱՆ	»	12 լ.
ՓՈՔՐԻԿ ՀԵՐՈՍՈՒՀԻՆ		12 լ.
ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ ՓՈՔՐԵՐԻ ՀԱՄԱՐ		8 լ.
ԹՌՉՈՒՆՆԵՐ (գունատիպ այլբոմ)		25 լ.
ՅԵՐԱԺԻՇՏ ԴԱՆԻԿԸ	(մեծաղիր, նկարագարդ)	33 լ.
ԴՈՇԻԿԸ ՃԱՀՃՈՒՄ	»	20 լ.
ԻՆՉՈՎ ԿՈՒՑՅԵՑԻՐ ՃԱՄԲՈՐԴԵԼ	»	30 լ.
ՏԻՄԸ	»	18 լ.
ԵԼԵՔՏՐԱԿԱՆ ՀԱՎ	»	28 լ.
ՓՈՔՐԻԿ ԽՈՆ	»	18 լ.
ՌԻԿԻ-ՏԻԿԻ-ՏԱՎԻ	»	25 լ.
ՀՆԴԻԿՆԵՐԻ ԱԲԱՋՆՈՐԴԸ	»	
ՍԱՄՑԻ ՎՐԱ	»	

Տպագրվում են՝

ՏՈՆ ՈՐՎԱ ԳԻՇԵՐԸ	»	»
ՃՈՒՏԻԿՆ ՈՒ ԿՈՒՏԻԿԸ	»	»
ԿԻՇԸ	»	»
ԽՈԴԻԱՆ	»	»



17519

25 ԿՈՊ.

Հարմ.
4-652



Р. Киплинг
Рикки-Тинки-Тави
На армянск. языке



ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СОЮЗА ССР
Москва, центр, Никольская, 10

ՀՀ Ազգային գրադարա



NL0376255

717

4-656